ԿԱՐԾԻՔ

ՀՊՏՀ-ի «Բիզնես վարչարարության» ամբիոնի ասպիրանտ՝ Էմիլ Արաիկի Գրիգորյանի «Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ***Ը.00.02*** *«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար*

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում նոր խնդիրներ են առաջանում՝ կապված մարդկային ռեսուրսների կառավարման հետ, քանի որ թվային տնտեսությունը նոր հրամայականներ է ներկայացնում: Եթե նախաինդուստրիալ տնտեսական համակարգերում արտադրության վճռորոշ գործոն էր հողը, ինդուստրիալ հասարակարգերում՝ ֆիզիկական կապիտալը, ապա հետարդյունաբերական տնտեսական համակարգերում վճռորոշ գործոն է մարդկային ռեսուրսը: Եվ տրամաբանական է, որ արտադրության տեխնոլոգիական հենքի փոփոխությունը պայմանավորեց նաև մարդկային ռեսուրսների նկատմամբ գործատուի վերաբերմունքի փոփոխություն, քանի որ աշխատողները այլևս չեն դիտարկվում որպես կապիտալի կցորդ, այլ՝ ինքնուրույն, արժեքավոր, ներհատուկ (ինտերսպեցիֆիկ) գիտելիքներով և հմտություններով օժտված ռեսուրս, որը գիտակցելով իր ռեսուրսի ինտերսպեցիֆիկությունը, ակնկալում է համապատասխան վերաբերմունք: Եվ այս ամենն իր արտացոլումն է գտել և՛ գործնականում, և՛ ՄՌԿ տեսություններում, որոնք դարձել են ավելի «մարդակենտրոն» , և ակնհայտ է, որ այս միտումներն էլ ավելի են խորանալու և ստանան նոր դրսևորումներ: Այս առումով ընտրված թեման շատ արդիական է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u>

Ատենախոսության նպատակը Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրների համատեքստում

առանցքային գործառույթների բացահայտումը և արդյունավետության գնահատումը, ինչպես նաև արդյունավետության բարելավման հնարավոր ուղիների վերհանումն են: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- մարդկային ռեսուրսների կառավարման էության ուսումնասիրություն,
- կազմակերպության գործունեության համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման դերի ուսումնասիրություն,
- մարդկային ռեսուրսների կառավարման տեսական և գործնական հայեցակարգերի էվոլյուցիայի և արդի միտումների ուսումնասիրություն,
- Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման միտումների և հեռանկարների ուսումնասիրություն,
- Հայաստանի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում աշխատանքի շուկայի և զբաղվածության առանձնահատկությունների վերլուծություն,
- բարձրտեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններում մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգային մոտեցումների ուսումնասիրություն,
- Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում անձնակազմի հավաքագրման և ընտրության քաղաքականության արդյունավետության վերլուծություն,
- Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման գործառույթների առանձնահատկությունների ուսումնասիրություն և դրանց արդյունավետության գնահատում:

<u>Ատենախոսության հիմական արդյունքներն ու գիտական նորույթը</u>:

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հետևյալները՝

1. Միջազգային փորձի և Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի երկարաժամկետ խնդիրների ուսումնասիրության հիման վրա մշակվել է ՏՀՏ ոլորտում զբաղվածության բազմագործոնային մոդելը, որի վերլուծությունը ցույց է տվել, որ որակյալ աշխատուժի գործոնը, պայմանավորված հատկապես կրթական համակարգի որակով, զբաղվածության վրա ազդող հիմնական գործոնն է:
2. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում իրականացված մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի բազմակողմանի վերլուծության, այդ թվում միջազգային փորձի տեսական մոտեցումների հիման վրա՝

ա/ առանձնացվել են ՄՌԿ արդյունավետության վրա առավելապես ներազդող հավաքագրման և ընտրության, ուսուցման և վերապատրաստման գործառույթները:

բ/ առաջին անգամ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում էկոնոմետրիկ վերլուծության միջոցով իրականացվել է մարդկային ռեսուրսների կառավարման առանցքային գործառույթները՝ հավաքագրումն ու ընտրությունը բնութագրող աշխատանքի առաջարկի ընդունման վրա առանձին գործոնների ազդեցության գնահատում:

3. Գնահատվել է ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների աշխատանքի արտադրողականության վրա նրանց ուսուցման և վերապատրաստման, ինչպես նաև դրա հետ կապված այլ քանակական ու որակական գործոնների ազդեցությունը, որի արդյունքներն անհրաժեշտ է հաշվի առնել արտադրողականության աճի առաջանցիկ տեմպերի ապահովման նպատակով:

Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը: Ատենախոսությունում ներկայացված տեսական դրույթները կարող են կիրառվել բարձրտեխոնոլոգիական ոլորտում մարդկային ռեսուրսների կառավարմանը նվիրված հետազոտություններում: Ատենախոսությունում ներկայացված եզրակացությունների հիման վրա կարող է մշակվել ՏՏ ոլորտի զարգացման ռազմավարությունը՝ միտված

ոլորտում զբաղվածության աճի ապահովմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններում կարող են քայլեր ձեռնարկվել մարդկային ռեսուրսների կառավարման առանձին գործառույթների բարելավման ուղղությամբ, որի վերջնանպատակը կազմակերպությունների գործունեության ցուցանիշների բարելավումն է:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 154 էջի վրա, ներառյալ՝ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել հետազոտության նպատակն ու խնդիրները, առարկան և օբյեկտը, ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական նորույթները, հիմնավորվել հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մարդկային ռեսուրսների կառավարման էությունը, տեսամեթոդական հիմքերը և առկա միտումները» գլխում ուսումնասիրվել են ՄՌԿ էությունը և կազմակերպության գործունեության համակարգում դրա դերը, ամփոփ կերպով ներկայացվել են ՄՌԿ տեսական և գործնական հայեցակարգերի էվոլյուցիան և արդի միտումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Աշխատաշուկայի հիմնախնդիրները ՀՀ ՏՏ ոլորտում և մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները բարձրտեխնոլոգիական ոլորտներում» գլխում ուսումնասիրվել են Հայաստանի ՏՏ ոլորտի զարգացման միտումները և հեռանկարները, իրականացվել է Հայաստանի ՏՀՏ ոլորտում աշխատանքի շուկայի և զբաղվածության առանձնահատկությունների վերլուծություն, ինչպես նաև բարձրտեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններում ՄՌԿ հայեցակարգային մոտեցումների ուսումնասիրություն:

Ատենախոսության երրորդ՝ «Մարդկային ռեսուրսների համալրման և զարգացման առանձնահատկություններն ու հիմնախնդիրները ՀՀ ՏՏ ոլորտի կազմա-

կերպություններում» գլխում իրականացվել է Հայաստանի ՏՏ ոլորտի կազմակերպություններում անձնակազմի հավաքագրման և ընտրության, ուսուցման և վերապատրաստման գործառույթների առանձնահատկությունների ուսումնասիրություն և դրանց արդյունավետության գնահատում:

Եզրակացություններում և առաջարկություններում ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աշխատաշուկայի և ոլորտի կազմակերպություններում մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա ատենախոսի կողմից կատարվել են եզրահանգումներ և ներկայացվել խնդիրների լուծման ուղղությամբ գործնական առաջարկություններ:

Դիտողություններ և առաջարկություններ:

1. Գիտական նորույթի երկրորդ կետի ա ենթակետը ըստ էության նորույթ չէ: Նորույթի երկրորդ կետը կարելի է վերախմբագրել և այն ներկայացնել մեկ կետով: Ըստ էության, երկրորդ կետի բ ենթակետը լիովին համապատասխանում է գիտական նորույթի չափանիշներին, սակայն ունի խմբագրման կարիք:
2. 1.1, 1.2 և 1.3 ենթագլուխներում նկատելի է, որ հեղինակը ուսումնասիրել է մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) վերաբերյալ լայնածավալ գրականություն, ներկայացրել է ՄՌԿ տարբեր մոդելներ, սակայն իր մոտեցումներն ու ամփոփումները նշված խնդիրների շուրջ հստակեցված և համակարգված տեսքով ներկայացված չեն: Այս խնդիրը նկատվում է նաև 2.3 ենթագլխում, որտեղ հեղինակը իր ասելիքը ամփոփում է՝ հղում անելով ինքն իր հոդվածին: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ առավել հանգամանորեն ներկայացվեր իր տեսակետը խնդրի շուրջ:
3. 3.1 – ի 106-րդ էջումնշված է, որ հարցմանը մասնակցել են 10 փոքր, 11 միջին և 6 խոշոր կազմակերպություններ, սակայն հետազոտությունում

ընդգրկվել են միայն փոքր և միջին ձեռնարկությունները: Չկա որևէ հիմնավորում, թե ինչու չեն ընդգրկվել խոշոր կազմակերպությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Էմիլ Արահիկի Գրիգորյանի «Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրները ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում» թեմայով ատենախոսությունը, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համա, համապատասխանում է ՀՀ Կառավարության 1997թ-ի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև՝ ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է **Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:*

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ՝ / / *Ֆ.Ն.Մայիլյան*

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Ֆ.Ն.Մայիլյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝ ՀՊՏՀ գիտական քարտուղար / / *Ն. Հ.Դարբինյան*

10.01.22